

ԴԻԻԹՈՂ



ՀՆՁԻԻՆՆԵՐ

Վասմասիկան Էթագ մի գործողութեամբ

(ստամբուլ)

բարգ. Յակոբ Յակոբեանի

891-71

9-44

«Տարաբնակ» «Տարաբնակ» 19 NOV 2018

29/5 1911  
Նոյեմբ.

Ա. Գ. Ե. Յ.

Քաղաքապետ

891.71

7-44

այս


Դ Ի Ի Թ Ո Ղ



Հ Ն Ջ Ի Ի Ն Ն Ե Ր

1001  
413

Փրամատիկական կարգի մի գործողությանը ռազմաւորով  
բարեկամորէն Եւրոպական



Տպարան «ԳՅՈՒՍ» Գանձակ. փող.

1911

**ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ**

Վէրա . . . նորահարս

Դօլինին . . . նկարիչ

Շքեղ բուզուար, ծաղիկներ, արէլիածներ, արձանիկներ  
և այլն: Փափուկ կահ-կարասիք, բազմոց. պուֆ, կու-  
շետկաններ: Մեծ լուսամտիկով լամպա. ձախ կողմից  
դուռը. բեմի խորքում ապակիով ծածկւած դուռը դէ-  
պի այգին. աջ կողմից լուսամուտ

Այգում պարզ լուսնկայ գիշեր. երբեմնապէս լուռւմ է  
սոխակի ձայնը:

Վարագոյրը բարձրանալուն պէս բեմի յետից լուռւմ է վայլ \* )  
Վէրան նորահարսի զգեստով մտնում է ձախ դռնից.

**Վ.Է.ՐԱ.** (դիմելով դռնից դուրս)

Ո՛չ. անկարող եմ. ես այնպէս յոգնած—  
Հանգիստ եմ ուզում, դուք ինձ ներեցէք.  
Ի՞նչ... լաւ, յետոյ—գնացէք:

(Դարով նախաբեմ).

Վերջապէս անա նորից մեն-մենակ,  
Ուժասպառ դարցած՝ թոյլ եմ և տկար...  
Յիրաւի. քանի հոգսեր ու տանջանք  
կրեցի այսօր, քանի տառապանք.  
«Նրանելի օր», ախ, դու էլ եկար...  
Ինձ ի՞նչ է սպասում, որպիսի վիճակ-  
լի ազատութիւն ինքնակամ կեանքով,  
Թէ ստրկութիւն սակէ կապանքով.  
Ինձ ի՞նչ է սպասում... (տկտեց է դնում)

Որպիսի տխուր թախիծ է շնչում  
Այս նւագներից, արարիչ Աստուած,  
Վարժես թէ մէկը հենց ինձ է խղճում,  
Ինձ վրայ ողբում, ցաւում վշտացած...  
Ո՛ւմն է այս վայլը, որտեղից է այն,  
Նորա մէջ ինչ որ հարազատ մի ձայն,

\* ) Մոտիվայում կայսերական փոքր թատրոնի բեմի վրայ նւա-  
գում են Յիրույկայի «Сонъ любви послѣ бала» վայլը.

Մի շեշտ կայ տխուր, մի կեանք մոռացած...  
 Ծանօթ մի երազ՝ վաղուց վերապրած...  
 Իմ կրճքում՝ յուշերն անցած օրերի—  
 Միբարս են վառում անոյշ բերկրանքով,  
 Կարծես իմ առաջ անյայտ մի ձեռքով  
 Շաղ տւած լինի դիւթիչ պատկերներ,  
 Որոնք սահում են որպէս տեսիլներ  
 Խոշոր մոգական լապտերի ցոլքով:  
 Ահա անտառը... սարին՝ տնակը...  
 Ժապաւէնի պէս կապոյտ՝ գետակը  
 Փարւած բլուրին հոսում է մեղմիկ...  
 Իսկ հեռւում՝ դաշտեր, կանաչ ու ծաղիկ...  
 Ուր օրօրում է ոսկէ հաճարի  
 Արտը բուրալի...

Մթնում է օրը...  
 Քամին նազանքով շնչում է, շոյում  
 Եւ դայլայլիկը կայտառ բլրուլի  
 Հեշտանքով ծորում...  
 Լուսնի տակ շողուն  
 Կարծես միաձուլ հսկայ պատի պէս  
 Կանգնել է մայրի անտառը սիրուն.  
 Ահա և պարտէզ՝  
 Անինամ, ջարդւած ցահկապատերով,  
 Լճակը ծածկւած տիղմի շերտերով...  
 Ծանօթ պատկերներ, անդարձ հմայքի,  
 Որով դիւթում էք, յուզում իմ հոգին.

Քաղցր է ձեզ յիշել, հարազատ վայրեր,  
 Հայրական օջախ,  
 Ուր անցուցել եմ օրերս մատաղ,  
 Գուցէ և լսել  
 Առաջին անգամ այս վայլսը չքնաղ...  
 Օ՛, ինչպէս նա այժմ ծանօթ է սրտիս.  
 Ականջ դնելով նրա դայլայլին,  
 Կուզէի անգամ հակառակ կամքիս  
 Գոնէ մի վայրկեան դառնալ անցեալին—  
 Դառնալ անցեալի խինդ ու տանջանքին,  
 Որ նորից ապրէր իմ տանջւած հոգին...  
 Ա՛խ, սէր ես, դու սէր, ոսկէ ժամանակ,  
 Անցած—գնացած կեսնքի հուր-հմայք...

(Ընկնում է՝ խոր մտածմունքի մէջ. վայլսը դադարում է)

Միթէ... ո՛չ. ո՛չ... այդ ցնորք է միայն...  
 Ահա որտեղից ականջիս հասան  
 Հոգուս հարազատ այս հնչիւնները.  
 Ծառերի շուկ... լուսնի շողերը,  
 Ծառուղի... գիշեր.  
 Նա իմ դողդոջուն սեղմեց ձեռները.  
 Նրա շուրթերից ջերմ սիրոյ խօսքեր  
 Ծորում էին մեղմ... ես դողում էի...  
 Եւ դահլիճի բաց պատուհաններից  
 Դիւթող նըւազի ցայտում էր թախիժ...  
 Ահա հէնց այս էր բաղդն իսկական.  
 Մենք սիրում էինք առաջին անգամ...  
 Նրա ամեն մի հնչիւնը ձայնի

Կլանում էի ազահի նման...

Նա ինձ ասում էր. մեզ կբաժանի  
Շիրիմը միայն...

Ասում էր. կորչի ցաւ ու տառապանք,  
Մեզ վիճակած է երջանիկ մի կեանք...  
Ասում էր... բայց ո՛ր, ո՛ր է նա հիմա,  
Դուք ո՛ր էք թո՛ւել, բաղտաւոր ժամեր,  
Ողջ երեք տարի մենք չենք պատահել—  
Ամեն ինչ անցաւ երազի նման...

(Յես է նայում եւ նկատելով բիչ առաջ մտած Դօլիմիմից,  
բացակացում է)

Ինչպէս... դ՛նք, այստե՛ղ...

Դ Օ Լ Ի Ն Ի Ն

Դուք սարսափեցի՛ք.

Օ, մի վախենաք, ուրական չեմ ես,  
Թէև գալիս եմ այս ուշ գիշերին.  
Շրջիկ մեռեալի սուերը չեմ ես  
Եւ ո՛չ էլ նման չար սատանային.  
Հեռու նենգաւոր, սև միտումներից՝

Ընդունակ եմ դեռ

Անցեալի յուշերն իմացածիս պէս  
Ես գնահատել...

Իսկ դրժած խօսքիդ, երդումիդ համար  
Վրիժառու լինել չէի ցանկանալ:

Վ Է Ր Ս

Ինչո՞ւ դուք եկաք... ինչո՞ւ... հեռացէ՛ք...

Ես պարտաւոր եմ ձեզ չպատահել,  
Զտեսնել երբէք:

Դ Օ Լ Ի Ն Ի Ն

Դուք պարտաւոր էք .. Օ, ո՛չ, մի դողաք,  
Մի վախէք, մեզ այժմ չեն տեսնիլ մարդիկ,  
Որպէս չտեսան ե այն ժամերին,  
Երբ մեր հին ծանօթ ցանկապատի մօտ  
Թագնւում էի կէս գիշերներին.

Թիկնոցը՝ ուսիս, յոնքիս՝ գլխարկը,  
Լուռ բացում էի տանդ դռնակը...

Օ, ո՛չ, մեզ տեսնող ոչ ոք չէր լինում,  
Եւ ոչ նկատում մեզ՝ համբուրելիս:

Ոչ ոք չէր լսում երգումն ու խոստում.  
Քամին էր միայն մեզ ականջ դնում,

Ծածկաբար լսում, փչում ու ցրում  
Այն ամենը, ինչ այնպէս խնամքով

Փայփայել եմ ես հոգուս կրակով—  
Պաշտել ու սիրել...

Թո՛ղ այդ ամենը մի երազ լինէր,  
Բայց ես տարւել եմ ամբողջ էութեամբ  
Մի իսելառ, կրքոտ անհամբերութեամբ...

Վ Է Ր Ս (ընդհատելով)

Ախ ո՛չ, այդ չէի կամենում ասել.  
Պատասխանեցէք. ինչո՞ւ էք եկել...

Դ Օ Լ Ի Ն Ի Ն

Ինչո՞ւ... որ անա ձեզնով հիանամ...

Ու տեսնեմ ես ձեզ, և հէնց միայն ձեզ.  
 Բազորի վայելքով հրճւեմ, լիանամ,  
 Գուցէ և լինի այս վերջին անգամ...  
 Ահա թէ ինչու...

Վ Է Ր Ա

Բայց այստեղ... այսօր... այս ուշ գիշերին...  
 Ի՞նչ էք կամենում... ձեզ չեմ հասկանում,  
 Ես չեմ սիրում ձեզ.

Գ Օ Լ Ի Ն Ի Ն

Այո, գիտեմ ես.  
 Ձեզ վախ է ազդում իմ գալը նորից.  
 Մտածում էիք, հարկաւ, ճիշտ այսպէս.  
 Անշատուհն սիրած իր հայրենիքից  
 Հազիւ թէ նորան երեք տարուց յետ  
 Չանձրոյթ պատճառի.  
 Ձինջ կամարի տակ այրող հարաւի,  
 Հեռու սիրածից՝ դուցէ մի քանի  
 Վաթիլ արտասուք կթափի լուիկ  
 Ու կը որոնի մի նոր հայրենիք.  
 Վամ խաչ դնելով անցեալի վրայ  
 Լացը կսրբի, սէրը կմոռնայ:  
 Օտար մի երկրում—  
 Թեթևաբարոյ կանանց շրջանում  
 Նրանց զրկի մէջ կըքոտ, մեղսալի,  
 Հանգիստ կգտնի, կտայ մոռացման  
 Տունը հայրենի, սէրը անցեալի...

Բայց սխալեցիք: Որպէս տարակիր  
 Դարձել եմ անա այս սառը երկիր,  
 Ուր թողել էի հիասքանչ եղեմ,  
 Որին ձգտել եմ սրտով կարօտած...  
 Բայց, Տէր իմ, այժմ ի՞նչ տեսայ իմ դէմ...  
 —Սև խարդաւանքի ոգին բոյն դրած—  
 Եւ նախկին եղեմն ինձ դժողք դարցած...

Վ Է Ր Ա

Ողջ երեք տարի... ո՛ւր անհետացար,  
 Ջրասոյզի պէս աչքէս չքացար.  
 Ձեզ գրում էի... բայց դուք լռեցիք...  
 Այժմ ասացէք. հաւատալու ձեզ  
 Դորանից յետոյ կարո՞ղ էի ես:  
 Երեք ձիգ տարի, ո՛ւր, ո՞ր աշխարհում  
 Թագնւել էիք, և ինչպէս ապրում...  
 Հրաժեշտ առաք... թողիք... մոռացաք...  
 Այդպէս, ուրեմն, մի՛ էլ զարմանաք,  
 Որ համարելով անցեալը կատակ՝  
 Խանդավառ սէրս յաղթահարեցի  
 Եւ ցնորքներին  
 Բանականութիւնն զերադասեցի:  
 Ինձ յանդիմանել չունիք իրաւունք.  
 Ես հաւատում եմ գործին, ո՛չ խօսքին,  
 Էլ ի՞նչ էք ուզում ինձնից դուք...

ԳՕԼԻՆԻՆ (ընդհատելով)

Ոչինչ...

Հենց այնպէս միայն, որպէս նկարիչ  
 Կուզեմ նկարել մի փոքրիկ պատկեր.  
 Որպէս արձագանք անցած օրերի  
 Այժմ կեանք տւաւ նա իմ յուշերին.  
 Իջել է գիշեր. լուսինն է փայլում,  
 Աստղերը շողում երկնակամարում.  
 Անտառը թախծոտ նիրհում է խորին,  
 Ննջում են ջրերն իրենց ափերին.  
 Խոնարհած գլխով գետնին են նայում  
 Ուռենիները, և թաւուտներում  
 Առունների մօտ ողբալով ծորում  
 Դիւթող նւազը կայտառ բլրուկի.  
 Նիրհում է բնութիւն... քնած են մարդիկ...  
 Օ, այս գիշերը որքան է գեղուն,

Որքան գեղեցիկ...

Իմ տանջւած կրծքից, որպէս կապանքից  
 Ազատութիւն է հոգիս աղերսում  
 Եւ արագ-արագ սիրտս բարախում.  
 Քունն էլ ակամայ փախչում է աչքից.  
 Ախ, լաւ է ապրել և ուրախ շնչել

Մի այսպէս գիշեր.

Այսպիսի գիշեր դուք լաւ էք քնում,  
 Եւ չէ՛ քարշում ձեզ  
 Դէպ ազատութիւն ու դէպի պարտէզ  
 Թարմ ծաղիկների բոյրը հեշտագին...

ՎԷՐԱ (յուզում)

Ինչո՞ւ համար են ձեր այդ խօսքերը...

ԳՕԼԻՆԻՆ

Նայել աստղերին... նայել լուսնեակին...  
 Այո, այդպիսի մի թովիչ գիշեր  
 Կկամենայի ձեր միտը բերել.  
 Կարծեմ վաղուց էք նրան մոռացել,  
 Գուցէ և առանց մի հառաչանքի:

ՎԷՐԱ (տախտում)

Ո՛չ... սխալում էք...  
 Մոռանա՞լ, երբէք... բայց ինչպե՞ք.  
 Մեր մէջ ամեն ինչ կարծեմ վաղուց է  
 Հանգել, վերջացել... ինչո՞ւ էք եկել...  
 Ինչո՞ւ սրտիս մէջ նման խօսքերով  
 Կամեցաք նորից կրակ բորբոքել...  
 Որքան վատ է այդ, անգուժ ձեր կողմից.  
 Այո, գուցէ և մեղաւոր եմ ես—

Այդ կարելի է.

Բայց վերագառնալ անցեալին նորից—  
 Անկարելի է.

Ես երդւել էի անխոհեմաբար...

ԳՕԼԻՆԻՆ

Եւ շտապեցիք ինկոյն մոռանալ.

Կնոջ երգումին, այո, հաւատար...

— Այդ կարելի է.

Դէ բաւական է, դադարէք կեղծել.  
Չեմ եկել այստեղ, որ խաղամ ձեզ հետ  
Ոչ աչքակապուկ, ոչ էլ աղաչել.  
Այլ մի պատասխան ձեզնից պահանջել:

Վ Է Ր Ա. (կայտոս)

Քայց ձեզ ո՛վ տւեց այդ իրաւունքը.

Դ Օ Լ Ի Ն Ի Ն

Իմ սէրը. Վէրա, պէտք է իմանամ  
Դատավճիռս. թող թէ հագել էք,  
Պսակի շորեր, թո՛ղ թէ աւրել էք  
Եղեմը հոգուս... բայց մի՛թէ ընդ միշտ  
Ձեր սրտից անգամ  
Արտաքսւած եմ ես անհետ, յաւիտեան,  
Մի՛թէ չքացել որպէս ուրւական:  
Լսիր ինձ, Վէրա, (բռնում է նրա ձեռքը)

Վ Է Ր Ա.

Ի սէր Աստծոյ, թողէք ինձ հանգիստ...

Դ Օ Լ Ի Ն Ի Ն

Թո՛յլ տուր ինձ ապրեմ էլի մի անգամ  
Եւ շէմքիդ առաջ  
Դաւաճանութեան ցաւը մոռանամ.  
Թո՛յլ տուր սիրեմ քեզ, գրկիս մէջ առած.

Ինչո՞ւ համար է պսակի շղթան,  
Քեզ եմ պատկանել, քոնն եմ յաւիտեան.

(ծուցկ է չոփում)

Քեզ հետ աշխարհը պիտի մոռանամ,  
Ոտքերդ փարած այսպէս կմնամ,  
Սակայն, միայն ես, ուրիշը՝ երբէք:

Վ Է Ր Ա.

Թողէք ինձ, թողէք...

Դ Օ Լ Ի Ն Ի Ն

Վէրա... խնդրում եմ...  
Նայիր մի՛ ըսպէ ուղիղ աչքերիս...  
Տես, ինչպէ՞ս այրւում, տանջւում է հոգիս.  
Ո՞ւր է մեր սիրոյ այն չքնաղ երանգ,  
Ահա՛ ես այստեղ ու նորից քեզ հետ  
Ոտքերդ ընկած...  
Օ, պէտք է, պէտք է որ ինձ հասկանաս...  
Ի՞նչ ես դու, իմը... էլ չեմ դառնայ յետ...

Վ Է Ր Ա. (բուլացած)

Ատուած իմ, ի՞նչ է պատահում ինձ հետ...  
Թո՛ղ, թո՛ղ ինձ, գնա՛, կորէք, հեռացէք...

Դ Օ Լ Ի Ն Ի Ն

Օ մի՛ արտաքսիր,  
Միայն մի վայրկեան, մի ըսպէ լսիր...



Վ Է Ր Ա (ազատելով գրկից)

Այս ինչ տանջանք է...

ԴՕԼԻՆԻՆ (ոսփի է կանգնում ու մտեցնում լուսամուտին)

Վէրա, յիշում ես այն պարզ գիշերը.  
Նայիր այստեղից... լուսինն է փայլում  
Առաջւայ նման երկնակամարում.

Քնարը ոստերով նիրհած անտառը  
Օրորում մեղմիկ...

Որպէս և առաջ հնչում սոխակի  
Դիւթող երգերի անուշ մեղեդիկ...  
Օ, Վէրա, Վէրա, միթէ մոռացար,  
Դու այս բոլորը.

Նայիր այստեղից, տես այս ամենը,  
Որքան է սիրուն, որքան գեղեցիկ,  
Սոքա շնչում են մեր բաղդի համար.  
Օ, ինչ սոսկալի անգուժ մի հարւած՝  
Այսպիսի գիշեր լինել մոռացւած...

Վ Է Ր Ա

Աղաչում եմ ձեզ... սրտիս տանջանք...  
Դուք մարդ չէք, այլ դև չար ու խորամանկ...  
Ինչու դուք եկաք... Աստուած իմ, Աստուած...

(քեսի յետեից լուում է վայսի հնչիւններ)

Դ Օ Ն Ի Ն Ի Ն

Տէր իմ, ուսկից են այս հնչիւնները.  
Կար մի փամփոսակ

Այս վայսը թախծոտ ողբում էր նոյնպէս...  
Յիշում ես, Վէրա, և միթէ իրօք  
Հանգաւ հոգուդ մէջ սիրոյ վառ կրակ  
Այսպէս վաղօրօք.

Իզուր ուրեմն աշխատում եմ ես  
Որոնել անցած սիրոյ արձագանք,  
Վամ լսել մի խօսք միսիթարական,  
Տեսնել գոնէ կայծ խղճահարութեան:

Վ Է Ր Ա. (բոյ)

Ի սէր Աստծոյ, թողէք, հեռացէք ..  
Սարսափում եմ ես, էլ դիմադրելու  
Ոյժ չկայ իմ մէջ. ինձ խնայեցէք...

ԴՕԼԻՆԻՆ (պարօսով)

Թնդացէք, շաչէք դիւթող հնչիւններ,  
Որպէս մոռացւած և այն գիշերին...  
Հառաչանք, արցունք տանջույ իմ հոգին  
Հեծեծանք, մորմօք և դուք չքացէք...  
Հոսէք, մտերիմ, աղի արցունքներ.  
Ջերմացէք նորից վառ երազներով,  
Օ, վերադարցէք անմիտ ցնորքներ  
Լի ուրախութեան քաղցր յոյզերով ..  
Թնդացէք այդպէս, դիւթող հնչիւններ,  
Բեկ-բեկ դողացէք այս լուռ գիշերին,  
Ինձ յետ դարձրէք իմ երջանկութիւն  
Նիրհած, մոռացւած հոգոյս խնդուժիւն:

1001  
413

ՎԼԻՔԱ (փառելով ճրագ)

Սյն քաղցր երազ. ան ինչու համար  
 Դու միտս բերիր, անողոք ոգի,  
 Վկայ է Աստուած, կուեղեմ յամառ—  
 Դու դուրս կորզեցիր խոստովանութիւն:  
 էլ ինչո՞ւ են պէտք կռիւ, երերում,  
 Սյո, ես քոնն եմ, ես քեզ եմ սիրում...  
 Ընդունիր իմ սէր:  
 Գեանքն անիծելով ուխտել եմ լինել  
 Քեզ հաւատարիմ, բայց բաղձն անողոք  
 Խորտակեց, աւրեց իմ բողբոջ յոյսեր ..  
 Տեսնում ես անա ինչպէս եմ լալիս...  
 Փախչենք միասին, հեռանանք այսպէս...  
 Ես սիրում եմ քեզ..

Դ Յ Լ Ե Ն Ի Ն


Դո՛ւ, սիրում ես... դո՛ւ... (յես է մղոււմ, նրեով)  
 է՛լ բաւական է որքան ստեցիր.  
 Կանգ առ կրքերի և բոպէական  
 Մեղկ հաճոյքների դու ստրկունի:  
 Ինչո՞ւ զոհում ես մի նոր յանցանքով  
 Դու քո պատիւը կանացիական:  
 Չեմ եկել այստեղ թաքուն ու գաղտուկ,  
 Որպէս աւագակ մութ գիշերային,  
 Ահը սրտիս մէջ մարդկանցից ծածուկ՝  
 Որ անոյշ խօսքով քեզ գրաւելով,  
 Համբոյրներ խլեմ խայտառակ գնով:

Չեմ եկել այստեղ խղճիս անունով  
 Սիրահար կոչումն ինձ վրայ առնեմ,  
 Ոչ էլ հմայքովդ ես մխիթարւեմ. .  
 Օ՛, ո՛չ, քեզանից խաբւած այն օրէն  
 Ուխտել եմ ապրել այն քաղցր յոյսով  
 Որ տանջանքներիս, վշտիս փոխարէն  
 Վրէժս առնեմ:  
 Եւ անա հասաւ ցանկալի բոպէն,  
 Եկայ ես այստեղ անսպասելի  
 Եւ սիրոյ անոյշ թոթովանքներով  
 Յուզեցի առժամ յուշերն անցեալի,  
 Մոռացւած երազ, ցնորք և անցեալ...  
 Եւ ինչ... մի դատարկ փորձութեան անգամ  
 Դու չզիմացար:

Ո՛չ. անկարող եմ քեզ նորից սիրել,  
 Նորից հաւատալ խաբեբայութեան  
 Եւ երջանկութեան կայծը որոնել,  
 Աշխարհի առաջ քեզ ինձ սրբութիւն  
 Եւ կուռք համարել ու ստել... ստել...  
 Քեզ պէս անխնայ... ո՛չ, ներողութիւն.  
 Չեմ եկել այստեղ սէր որոնելու,  
 Վաճառքի հանած գեղեցկուհու սէր  
 Յափշտակելու...  
 Այլ եկայ նայեմ ու հրճւեմ սրտանց,  
 Տեսնեմ, թէ ինչպէս դու ստորացել,  
 Ընկել ես անդարձ.  
 Եւ ինչ... պսակիդ առաջին օրից

Գու գաւաճաննի ուզում ես նորից.  
Օ՛, չէս արժանի դու ցաւակցութեան:  
Եւ ինչո՞ւ համար սխալ սիրեմ քեզ.  
Միթէ կրկնակի դաւաճանութեան,  
Կատաղի, կրքոտ վավաշոտութեան  
    Համար սիրեմ քեզ,  
Թէ նորա համար որ թերանալով  
    Տւած երդումիդ,  
Ուզում ես խաբել և՛ նշանածիդ:  
Իմ խորունկ սրտի բարձր յուզումներ  
Միթէ կարող եմ ես քեզ նւիրել.  
Ճնշելով հոգուս ճշող ցասումներ  
Կարո՞ղ եմ կրծքիդ հանգիստ որոնել:  
Ո՛չ, մնաս բարև... հեկեկանքները  
    Քեզ չեն օգնելու...  
Ժամանակ էլ չէ արցունք թափելու:  
Օ՛, Տէր... և միթէ այսպիսի կանայք  
Կարող են լինել սիրոյ ընդունակ...

(Հեռանում է. Վերան հեկեկում է. վայսր հեզկեսէ,  
    հանգչում է հեռւից)



«Ազգային գրադարան»



NL0318612

10.372

ԳԻՆԸ՝ 20 ԿՈՊ.

*Ներկայացման համար գինեկ թարգմանչին՝*

Тифлисы. Коммерческ. Банкъ. А. АКОШИՄՍ

^

Արտատպագրություն  
1. Գ Ե Մ Ե Մ Ե Մ Ե  
Ե Կ Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե